ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հոկտեմբեր)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2023թ. հունվար-հոկտեմբերին 2022թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 109.2%, 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 114.5 %, իսկ 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104.4%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ.հուվար-հոկտեմբեր կազմել է 2 տրլն 94 մլրդ 935մլն դրամ, ինչը 2022 թ նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 33 մլրդ 612.1 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 246մլրդ 745.2 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 418 մլրդ 243 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 57 մլրդ 479.6 մլն և 111 մլրդ 891,6 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 4 տրիլ, 247մլրդ 182.3 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 823մլրդ 354. 9 մլն և 1 տրլն 567մլրդ 93.1 մլն դրամով, իսկ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ.հունվար-հոկտեմբեր կազմել է 2 տրիլիոն 483 մլրդ 833,8 մլն դրամ, ինչը 2022 և 2021թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 409 մլրդ 520.2 մլն և 958 մլրդ 278,3 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հոկտեմբերին 2022թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 99.5 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109,9 %-ի և 101.1 %-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հոկտեմբերին 2022թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 116.4 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 114.4 %-ի և 106.1-ի %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2023թ հունվար-հոկտեմբերին 2022թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 123.3% 2022 - 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 115.5 %-ի և 107.0 %-ի պարագայում. իսկ այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2023 հունվար-հոկտեմբեր 2022թ. հունվար-հոկտեմբեր նկատմամբ կազմել է 112.1 %, 2022 և 2021 թվականների ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 127.9 %-ի և 106.4%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-հոկտեմբեր կազմել է 396 մլրդ 784.3 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 40 մլրդ 975.7 մլն դրամով, 2021 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 94 մլրդ 202.6 մլն դրամով: Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հոկտեմբեր կազմել է 1 տրլն 415 մլրդ 306.4 մլն դրամ, ինչը 2022 թ և 2021 թ նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է՝ համապատասխանաբար 14 մլրդ 500.1 մլն և 300 մլրդ 18.2 մլն դրամով: Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը 2023թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 257 մլրդ 876.8 մլն դրամ, (ընթացիկ գներով), ինչը 2022թ. ցուցանիշից պակաս է 9 մլրդ 305.9 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 35 մլրդ 328.5 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հոկտեմբեր կազմել է 24 մլրդ.967.5 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 2 մլրդ 169.4 մլն և 5 մլրդ 601.1 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հոկտեմբերին 2022թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 95.3%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 94.9 %-ի և 99.6 %-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հոկտեմբերին 2022թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 99.8 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 118.1 %-ի և 100.2 %-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հոկտեմբերին 2022թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 104.5 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.6 %-ի և 107.5 %-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հոկտեմբերին 2022թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 105.9 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.4%-ի և 107.6%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ.հուվար-հոկտեմբերին կազմել է 223 մլրդ 758.6 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 19 մլրդ, 153.4 մլն և 30 մլրդ 859.9 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հոկտեմբեր կազմել է 522 մլրդ 751.9 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021 թ,ի նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համա պատասխանաբար 160 մլրդ 89.6 մլն և 260 մլրդ 432.5 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 658 մլրդ 888 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանա կաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 23 մլրդ 166.9 մլն և 268 մլրդ 448.4 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հոկտեմբերին 2022թ հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 108,9 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.7 %-ի և 64.7 %-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հոկտեմբերի 2022թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 144,1 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 138.3 % և 111,5 %-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հոկտեմբերին 2022թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 91.7 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 149 %-ի և 102. 5 %-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2023թ. հոկտեմբերին 2022թ.հոկտեմբերի նկատմամբ կազմել է 102.5%, 2022թ հոկտեմբերին 2021թ նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 108.7%, 2021թ. հոկտեմբերին 2020թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.9%: ՍԳԻ-ն 2023թ. հոկտեմբերին 2022թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 98 %, 2022թ. հոկտեմբերին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 106 %, 2021թ. հոկտեմբերին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 104,2%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2023թ. հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1 տրլն 203 մլրդ 539 մլն դրամ, ինչը 91 մլրդ 348 մլն դրամով կամ 8.2 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից 45 մլրդ 509 մլն դրամով կամ 3,9%-ով 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2023թ. հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 65627 մարդ, ինչը 8409 մարդով կամ 11.4 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 22188 մարդով կամ 25.3 %-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2023թ. հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 45860 մարդ, ինչը 4870-ով կամ 9,6.%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 13198 մարդով կամ 22.3%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2023թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 15 մլրդ 445.5 մլն. դոլար, ինչը 4 մլրդ 507.9 մլն դոլարով կամ 41.2 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 8 մլրդ 902. 4 մլն. դոլարով 136.1 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը 2023թ. հոկտեմբերին կազմել է է - 3 մլրդ 855.3 մլն դոլար, ինչը -1 մլրդ 283.1մլն դոլարով կամ 49.9 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և -1 մլրդ 228.9 մլն դոլարով կամ 46.8 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը(ՖՕԲ գներով)2023թ.հոկտեմբերին կազմել է 5 մլրդ.795.1 մլն դոլար, ինչը 1 մլրդ 612.4 մլն.դոլարով կամ 38.5 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 665,7 մլն դոլարով կամ 40.3%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2023թ. հոկտեմբերին կազմել է է 9 մլրդ 650,4 մլն դոլար, ինչը 2 մլրդ 895.5 մլն. դոլարով կամ 42,9 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2մլրդ 894.6 մլն դոլարով կամ 42.8%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2023թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 263021 դրամ, ինչը 36400 դրամով կամ 16.1 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 64161 դրամով կամ 32.3 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2023թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -19 մլրդ 200 հազ դրամ ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 247 մլրդ 274.7մլն դրամ, արտաքին աղբ յուրների հաշվին ֆինանսավորումը՝ -228 մլրդ 274.5 մլն դրամ: 2022թ. հունվար-հոկտեմբերՀՀ պետական բյուջեի պակասուրդըկազմել է-12 մլրդ 956 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 167,444.2 և -154,488,2 մլն դրամ: 2021թ. հունվար-հոկտեմբերին պետական բյուջեի պակասուրդը կազմել է -202 մլրդ 18.1 մլն դրամ, ընդ որում ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -23,675,6 և 225,693.7 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ